

կան հրահանգով՝ դադար հրամայուեցաւ ջարդին: Թուրքը, որ ինքզինքը գտվելէ չի կշտանար այսօր, ու իր իմաստութիւնը կը յաւակնի փաստել իր պատմութեան հզօր յաղթանակներով, այս դարուն սկիզբը սա ժողովուրդն էր, առանց աւելորդութեան: Ու դարձեալ իրաւ էին, այս դարու սկիզբը, այդ գիծէ մարդերը: Քսան տարի ետք ատենք ալ պակսէին պիտի: 1921ին, վերածնուող Թուրքիան, երբ պոլսամերձ շրջաններու մէջ հոս ու հոն ծուարող վերջին բեկորներն ալ կը մաքրէր հայերուն, իր դերը կ'աւարտէ՞ր անգէն մարդեր մորթելու հերոսամարտին մէջ: Մեծատաղանդ ու այլապէս անսիրտ սպանդ մըն էր 1922ի յունական պարտութեան հետեւող կոտորածը: Կ'ըսեն, թէ բանակներու շարժումներէն դուրս ինկած ու տարագրութենէ հրաշքով ետ դարձող մարդոց վրայ գործադրուած եղեռնը ամէնէն տրտումն էր ջարդերուն: Բոլոր գեղերուն մէջ եղան սրտաշարժ տեսարաններ: Որովհետեւ արգիլուած էր կրօնափոխութիւնը, թուրքերը ստիպուեցան հանդարտ հոգիով ու արցունքոտ աչքերով մորթել ձեռք ձգուած հայերը, զանոնք լաւ մը կերակրելէ ետք, պզտիկները ամէնէն առաջ դանակէ անցընելով, ներսը, ախոռներու խորը, բերաննին կուղպ, որպէսզի իրենց ճիշերովը չխուովեն մեծերուն սիրտը: Մեծերը, զինուորապէս, աչքերնին կապելով ու երբեմն ալ քաջաբար ընդունուած դանակը կամաց շարժելով...: Ասոնք արարքներն են այն մարդոց, որոնք կը յաւակնին Ասիոյ ժողովուրդներուն քաղաքակրթութիւն ստեղծած ըլլալ...

Քէլ-էտհէմը, ոչ ոք գիտէր ինչ միջոցներով, կոնակը տուած Պոլիսին, այս դարուն սկիզբը կարող էր մահապարտը վար առնել չուանէն: Հակառակ այբն իսկ չճանչնալուն, անիկա իր տրամադրութեան տակ կը պահէր կառավարական բոլոր պաշտօնատուները, ուր, հարիւրաւոր տետրակներէն ոչ մէկ էջ կը դառնար, առանց իր հրամանին. այնքան ճիշդ է, որ կայսրութեան մը մէջ որքան անկշիռ է թուղթին դերը ու որքան հզօր, անվրէպ՝ սուրինը: Բոլոր պաշտօնեաները խորապէս ատե-